Հարգելի պարոն Անդրեասյան

Տեղեկացնում ենք Ձեզ,որ <<Մեղրիի կոմունալ տնտեսություն,բարեկարգում>> ՀՈԱԿ-ի տարեկան բյուջեի պլանում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ:

Ելնելով այն հանգամանքից,որ <<Համայնքային զարգացում>> ծրագիրը գործարկվել է մայիս ամսից,հետևաբար չեն կատարվել աշխատավարձի և նյութական ծախսեր:Տվյալ ծրագրի նախնական հաստատված տարեկան 11 000 000 դր բյուջեն անհրաժեշտ է կրճատել 4 500 000 դրամով և վերահաստատել 6 500 000 դրամով:

Տեղեկացնում ենք նաև ,որ գարնան ամիսներին կատարվել են ինտենսիվ կանաչապատման աշխատանքներ,որի հետևանքով մեծացել է <<Կանաչապատում>> ծրագրի աշխատավարձի ծախսը:Խնդրում ենք հաստատել տվյալ ծրագրի բյուձեի ավելացումը 5 900 000 դրամով:

<<Բարեկարգում>> ծրագրում կատարվել են ծախսերի վերահաշվարկ,որի հետևանքով պարզվել է ,որ JCB բազմաֆունկցիոնալ էքսկավատորների ամորտիզացիայի հետևանքով մեծացել են պահեստամասերի և վերանորոգման և պահպանման ծախսերը:Անհրաժեշտ է 71 000 000դր նախնական բյուջեն ավելացնել 9 000 000դրամով և վերահաստատել 80 000 000դր:

<<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրում կատարվել են մեքենաների վարձակալության և վառելիքի ծախսի վերահաշվարկ,որի հետևանքով պետք է կատարել բյուջեի նվազեցում 2 650 000 դրամով և վերահաստատել 43 350 000դր:

<<Փողոցների լուսավորում>> ծրագրում անհրաժեշտ է կատարել բյուջեի ավելացում 1 300 000դրամով,ելնելով անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով առաջացած փողոցային LED լուսամփոփների գերածախսից,վերահաստատել 21 300 000դր բյուջե:

<<Սանիտարական մաքրում>> ծրագրի բյուջեում կատարվել են տնտեսական ապրանքների և աշխատավարձի ծախսերի վերահաշվարկ,ըստ որի տարեկան նախնական 35 000 000դր բյուջեն անհրաժեշտ է ավելացնել 15 450 000դրամով:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով, <<Քաղաքի սան. մաքրում և աղբահանության ծառայության մատուցում>> ծրագրում ներառված աշխատակիցները աշխատանքներ են ծավալել <<Կանաչապատում>> և <<Սանիտարական մաքրում>> ծրագրերի շրջանակներում,որի հետևանքով նվազել է տվյալ ծրագրի աշխատավարձի ծախսը:Ելնելով այս հանգամանքից անհրաժեշտ է նախնական տարեկան հաստատված 121 000 000դր բյուջեն նվազեցնել 24 500 000 դրամով և վերահաստատել 96 500 000դր:

«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ–ի տնօրեն՝ Ն. Զաքարյան